ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.11.2019թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:
Բացակայում էր ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Թ. Ստեփանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Հայանտառ» ՊՈԱԿ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)՝ բացառությամբ հետևյալ դեպքի.

-«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի Հավելված 2-ում/գնային առաջարկ/ աղյուսակի արժեքը/ինքնարժեք և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ սյունակում նշվել է **63 005 040**, ԱԱՀ-ի սյունակում՝ **12 594 960**, ընդհանուր գինը սյունակում՝ **75 600 000**:
Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետև Կարգ/ 32-րդ կետի 2) ենթակետի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական

բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:
«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից **ներկայացված գնային առաջարկի ԱԱՀ-ի վճարվելիք գումարի չափը սխալ է** հաշվարկված, **քանի որ**.

-Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի /այսուհետև Օրենսգիրք/ 37-րդ հոդվածի՝ ապրանքի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե ապրանքի մատակարարման պահին այն գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ եթե ապրանքն արտահանվում է Հայաստանի Հանրապետությունից:

-Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի համաձայն ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1 ին մասի համաձայն Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:
Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4) ենթակետի պահանջները /հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «**Հայանտառ**» **ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը** մերժել:

2.4 19.11.2019թ. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետը /ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին/ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-10/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Ա. Մուրադյան
Գնահատող	_____	Վ. Ղազարյան
Գնումները համակարգող	_____	Մ. Ամիրյան